ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

Ն 568-Ա

07 դեկտեմբերի 2020 թ.

ԱՐՄԵՆԱԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Արմենակ Մելքումյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ճամբարակի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արմենակ Մելքումյանին տրամադրել 2020 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 2020 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 2021 թվականի հունվարի 19-ը ներառյալ:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ճամբարակի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունները 2020 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 2021 թվականի հունվարի 19-ը ներառյալ դնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ճամբարակի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բժիշկ-մաշկաբան Արարատ Խեչոյանի վրա:

3. Արմենակ Մելքումյանին աշխատանքի մեջ համարել 2021 թվականի հունվարի 20-ից:

07.12.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ